

4.2. ՀՀ սահմանային անցման կետերում ժամանողների և մեկնողների շրջանում 2006թ. սեպտեմբերից 2007թ. փետրվար ամիսներին իրականացված ընտրանքային հետազոտության նախնական արդյունքները

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, Ջրոսաշրջության զարգացման հայկական գործակալության (ՋՋՀԳ) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (ՄՄՀՀ) ծրագրի համագործակցությամբ 2006թ. սեպտեմբերից (6 ամիս տևողությամբ) իրականացրել է ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտություն հանրապետության բոլոր սահմանային անցման կետերում. «Զվարթնոց» և «Գյումրի» օդանավակայաններում, «Այրում» երկաթուղային կայարանում, ինչպես նաև «Մեղրի», «Գոգավան», «Բավրա» և «Բագրատաշեն» անցումային կետերում:

Ըստ ՄԱԿ-ի Ջրոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՋՀԿ) մեթոդաբանության, «զբոսաշրջիկ» է համարվում ցանկացած անձ, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր՝ ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

Ըստ նույն մեթոդաբանության՝ բոլոր ճանապարհորդները, ովքեր զբաղվում են զբոսաշրջությամբ, համարվում են «այցելուներ», որոնք էլ իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ «զբոսաշրջիկներ» (գիշերող այցելուներ) և «մեկօրյա այցելուներ» (առանց գիշերելու):

Հարցումն իրականացվել է ժամանողների և մեկնողների 3% ընտրանքի պարագայում, յուրաքանչյուր ամիս 7 ամբողջական օր տևողությամբ, նպատակ ունենալով հարցումն անցկացնել յուրաքանչյուր ամսվա մեջ ընդգրկված շաբաթվա բոլոր օրերը:

Ներգնա զբոսաշրջիկների մասին տեղեկատվություն հավաքագրելու նպատակով հարցումն իրականացվել է մեկնողների շրջանում, իսկ **արտագնա** զբոսաշրջիկների մասին՝ ժամանողների շրջանում, այսինքն երբ ճանապարհորդությունը համարվում է արդեն ավարտված և հետևաբար հարցազրույցը շարունակվել է մեկնող ՀՀ ոչ ռեզիդենտների ու ժամանող ՀՀ ռեզիդենտների հետ:

Ներկա դրությամբ ամփոփվել են հետազոտության 2006թ. սեպտեմբեր-դեկտեմբեր և 2007թ. հունվար-փետրվար ամիսների արդյունքները և ստորև ներկայացվում են դրանցից առավել կարևորություն ունեցող որոշ ամփոփ ցուցանիշներ: Միաժամանակ, հարկ է նշել, որ բերած տվյալները արտացոլում են հարցմանը մասնակցած այցելուների պատասխանների ամփոփված արդյունքները, և դեռևս չեն իրականացվել սուուգաճշտման և շեղումների գծով հարթեցման, միջինացման ու ընտրանքի արդյունքները գլխավոր համակցության վրա տարածման աշխատանքները (այդ աշխատանքները նախատեսված են իրականացնել 2007թ. ապրիլին և արդյունքները կիրապարակվեն 2007թ. ընթացքում):

Անհրաժեշտ է հաշվի առնել մի հանգամանք ևս, որ վերը նշված ամիսները դեռևս չեն արտացոլում զբոսաշրջության ընդհանրացված նկարագիրը և ստացված արդյունքներում առկա են շեղումներ, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ այդ ամիսների հարցման

տվյալներն ընդգրկում են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են Վրաստան-Ռուսաստան տրանսպորտային կապերի խզումը, Լիբանանյան պատերազմը, Հայաստան-Սփյուռք համաժողովը, արտագնա աշխատանքի մեկնած հայաստանյան քաղաքացիների բուն վերադարձի ժամանակահատվածը և վերջապես այն չի ընդգրկում ամբողջ տարին, այսինքն ստացված արդյունքները ունեն սեզոնայնության ազդեցություն:

Այնուհանդերձ, դիտարկված 6 ամիսների ընթացքում հարցմանը մասնակցել են 11286 ժամանողներ և 9143 մեկնողներ, ընդ որում համապատասխանաբար 37 և 81 հարցաթերթեր (ակնհայտ սխալներով և մեծ շեղումներով) ճանաչվել են անվավեր:

Հարցմանը մասնակցած ժամանողների և մեկնողների բաշխվածությունն ըստ սահմանային անցման կետերի 2006թ սեպտեմբերից 2007թ. փետրվար ամիսներին
(առանց անվավեր ճանաչված հարցաթերթերի)

	Ժամանողներ		Մեկնողներ	
	թվաքանակը, մարդ	տեսակարար կշիռը,%	թվաքանակը, մարդ	տեսակարար կշիռը,%
Ընդամենը	11286	100	9143	100
այդ թվում՝				
Օդային տրանսպորտով	7373	65.3	5380	58.8
«Գյումրի» օդանավակայան	392	3.5	303	3.3
«Զվարթնոց» օդանավակայան	6981	61.9	5077	55.5
Երկաթուղային տրանսպորտով	350	3.1	337	3.7
«Այրում» կայարան	350	3.1	337	3.7
Ավտոմոբիլային տրանսպորտով	3563	31.6	3426	37.5
«Բազրատաշեն»	1698	15.0	1622	17.7
«Բավրա»	703	6.2	659	7.2
«Գոգավան»	640	5.7	644	7.0
«Մեղրի»	522	4.6	501	5.5

Հարցմանը մասնակցած 11286 ժամանողներից 5783-ը ունեցել են ՀՀ ռեզիդենտի կարգավիճակ, իսկ 9143 մեկնողներից ՀՀ ոչ ռեզիդենտի կարգավիճակ են ունեցել 4865-ը:

Միևնույն ժամանակ, ռեզիդենտության կարգավիճակ ունեցող հարցվողներից թվով 497 ժամանող և 603 մեկնող ուղևորներ իրենց ճանապարհորդությունը կազմակերպել են մինչև 24 ժամ տևողությամբ (ունեցել են այցելուի կարգավիճակ), 34 ժամանող և 196 մեկնող եղել են դեսպանատների կամ զինվորական ստորաբաժանումների աշխատակիցներ, և ըստ միջազգային մեթոդաբանության, չեն համարվում զբոսաշրջիկներ և նրանց հետ հարցազրույցը չի շարունակվել: Հարկ է նշել, որ 953 ժամանողների և 162 մեկնողների ճանապարհորդության հիմնական նպատակը եղել է աշխատանքի արդյունքում եկամուտ ստանալը, որոնք նույնպես զբոսաշրջիկներ չեն համարվում, սակայն զուտ վիճակագրական նպատակներից ելնելով նրանց հետ հարցումը շարունակվել է և ստորև ներկայացված ելքային աղյուսակներում ներառված են նաև նրանց պատասխանները:

Արդյունքում, առանց աշխատանքի նպատակով այցելածների, հարցմանը մասնակցած ընդամենը ժամանողներից 4299 անձինք կամ 38.1%-ն են համարվել Հայաստանից մեկնած արտագնա զբոսաշրջիկներ, իսկ ընդամենը մեկնողներից 3904 կամ 42.7%-ը՝ ներգնա զբոսաշրջիկներ:

Արտագնա ճանապարհորդների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի 2006թ սեպտեմբերից 2007թ. փետրվար ամիսներին¹ (%)

Երկրները	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության	Այցելություն հարազատներին, ընկերներին	Այլ	Միջին ընդամենը
Ընդամենը	26.32	18.23	1.65	2.31	10.16	2.09	31.74	7.50	100
այդ թվում՝	6.81	12.11	0.54	1.99	3.98	0.82	16.22	2.37	44.84
Ռուսաստան	8.23	0.55	0.04	0.11	1.72	0.15	11.13	3.73	25.67
Վրաստան	0.75	0.80	0.00	0.10	0.23	0.04	1.17	0.25	3.33
ԱՊՀ Այլ երկրներ	1.53	2.14	0.02	0.04	0.21	0.21	0.88	0.33	5.36
Իրան	0.21	0.08	0.10	0.02	0.19	0.00	0.31	0.02	0.92
ԱՄՆ	0.75	0.00	0.08	0.00	0.71	0.25	0.25	0.02	2.05
Ֆրանսիա	0.67	0.08	0.13	0.06	0.25	0.11	0.29	0.04	1.63
Գերմանիա	0.31	0.67	0.00	0.00	0.19	0.04	0.27	0.04	1.51
Հունաստան	0.48	0.10	0.02	0.00	0.06	0.00	0.29	0.08	1.01
Սիրիա	0.40	0.04	0.25	0.00	0.19	0.00	0.25	0.04	1.17
Այլ արևելաեվրոպական երկրներ	0.38	0.04	0.21	0.00	0.15	0.08	0.15	0.02	1.03
Մեծ Բրիտանիա	0.25	0.00	0.02	0.00	0.17	0.02	0.02	0.00	0.48
Իտալիա	0.06	0.00	0.04	0.00	0.00	0.00	0.00	0.02	0.11
Ճապոնիա	0.02	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.04	0.00	0.06
Կանադա	0.00	0.00	0.00	0.00	0.02	0.00	0.00	0.00	0.02
Արգենտինա	0.04	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.04
Լիբանան	5.45	1.63	0.21	0.00	2.09	0.36	0.48	0.55	10.77
Այլ երկրներ	26.32	18.23	1.65	2.31	10.16	2.09	31.74	7.50	100

Ներգնա ճանապարհորդների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի 2006թ սեպտեմբերից 2007թ. փետրվար ամիսներին(%)

Երկրները	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության	Այցելություն հարազատներին, ընկերներին	Այլ	Ընդամենը
Ընդամենը	19.21	4.00	1.78	3.26	8.52	0.86	50.70	11.66	100
Ռուսաստան	5.41	0.47	0.07	0.59	1.46	0.30	27.07	5.11	40.48
Վրաստան	4.54	0.42	1.01	2.40	1.65	0.15	14.65	4.15	28.97
Իրան	1.93	2.17	0.40	0.10	0.62	0.02	1.19	0.32	6.74
ԱՄՆ	0.99	0.02	0.00	0.00	0.67	0.02	1.38	0.35	3.43
ԱՊՀ Այլ երկրներ	0.59	0.12	0.10	0.10	0.20	0.00	1.75	0.47	3.33
Ֆրանսիա	0.64	0.12	0.00	0.00	0.64	0.05	1.33	0.12	2.91
Այլ արևելաեվրոպական երկրներ	0.77	0.12	0.00	0.00	0.42	0.07	0.35	0.25	1.98
Գերմանիա	0.82	0.07	0.07	0.00	0.47	0.02	0.62	0.12	2.20
Մեծ Բրիտանիա	0.69	0.10	0.00	0.00	0.27	0.05	0.25	0.00	1.36
Սիրիա	0.25	0.02	0.07	0.00	0.22	0.02	0.32	0.05	0.96
Կանադա	0.12	0.00	0.00	0.00	0.44	0.00	0.20	0.10	0.86

¹ Այս և հետագայում բերված աղյուսակներում ներառված են նաև աշխատանքի նպատակով ճանապարհորդությունը կազմակերպած անձիք, որոնք, զբոսաշրջիկների հետ միասին, ըստ միջազգային մեթոդաբանության համարվում են «ճանապարհորդներ»:

4.ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Երկրները	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	Մարզական, մշակութային միջոցառումների մասնակցության	Այցելություն հարազատներին, ընկերներին	Այլ	Ընդամենը
Լիբանան	0.00	0.00	0.00	0.00	0.22	0.02	0.17	0.07	0.49
Իտալիա	0.17	0.12	0.00	0.00	0.10	0.02	0.05	0.10	0.57
Հունաստան	0.05	0.02	0.00	0.00	0.17	0.00	0.37	0.00	0.62
Ճապոնիա	0.05	0.02	0.00	0.00	0.15	0.00	0.00	0.07	0.30
Բրազիլիա	0.02	0.02	0.00	0.00	0.02	0.00	0.00	0.02	0.10
Արգենտինա	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
Այլ երկրներ	2.17	0.15	0.05	0.07	0.79	0.10	1.01	0.35	4.69

Արտագնա ճանապարհորդների սեռատարիքային բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի 2006թ սեպտեմբերից 2007թ. փետրվար ամիսներին

Սեռը և տարիքը	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	Մարզական, մշակութային միջոցառումների մասնակցության	Այցելություն հարազատներին, ընկերներին	Այլ	Միջին ընդամենը
Տղամարդ	64.0	84.3	41.9	46.3	48.2	61.5	41.8	50.5	57.2
Կին	36.0	15.7	58.1	53.7	51.8	38.5	58.2	49.5	42.8
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100
մինչև 17 տարեկան	0.3	0	3.5	3.3	2.4	6.4	2.5	0.8	1.5
18-35 տարեկան	30.8	25.5	82.6	15.7	56.3	60.6	29.9	24.5	32.8
36-55 տարեկան	63.5	70.3	14.0	48.8	36.9	32.1	47.4	61.5	55.0
56 և ավելի	5.5	4.0	0	32.2	4.3	0.9	20.2	13.3	10.8
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100
Միջին տարիքը, տարի	39.9	40.7	28.3	45.9	34.2	31.7	41.6	42.1	39.9

Ներգնա ճանապարհորդների սեռատարիքային բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի 2006թ սեպտեմբերից 2007թ. փետրվար ամիսներին

Սեռը և տարիքը	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	Մարզական, մշակութային միջոցառումների մասնակցության	Այցելություն հարազատներին, ընկերներին	Այլ	Միջին ընդամենը
Տղամարդ	83.5	79.6	59.7	40.9	61.7	71.4	51.2	58.3	60.3
Կին	16.5	20.4	40.3	59.1	38.3	28.6	48.8	41.7	39.7
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100
մինչև 17 տարեկան	0.1	0	8.3	0.8	0.3	2.9	1.7	0.6	1.2
18-35 տարեկան	25.7	31.7	76.4	19.7	36.2	71.4	25.2	24.8	27.6
36-55 տարեկան	65.5	59.0	12.5	58.3	44.3	17.1	54.2	58.1	55.2
56 և ավելի	8.6	9.3	2.8	21.2	19.1	8.6	18.9	16.5	16.0
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100
Միջին տարիքը, տարի	41.4	40.4	28.4	44.2	40.9	31.9	42.5	42.6	41.8

Արտագնա ճանապարհորդների ճանապարհորդության տևողությունն ըստ կացարանի տեսակի
և այցելության նպատակի 2006թ սեպտեմբերից 2007թ. փետրվար ամիսներին(օր)

Տեղաբաշխման վայրը	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության	Այցելություն հարազատների, ընկերների	Այլ	Միջին ընդամենը
Հյուրանոց	11.2	7.4	22.8	10.5	13.4	12.5	7.3	12.4	11.5
Վարձով բնակարան	30.2	180.1	83.0	112.0	35.9	37.0	106.7	168.5	124.6
Մ/Ն ¹ (B&B), պանդոկ	7.0	25.0	175.3	0	31.0	30.0	11.7	0	28.9
Բարեկամի կամ հարազատի տանը	18.8	166.1	117.6	90.4	59.3	35.9	46.0	25.8	52.9
Այլ	11.2	158.7	158.3	55.5	53.9	40.8	18.7	74.5	92.8
Մեկ զբոսաշրջիկի հաշվով միջին գիշերած օրերի քանակը	15.3	149.9	113.8	82.9	35.9	20.3	45.4	33.9	56.0

Ներգնա ճանապարհորդների ճանապարհորդության տևողությունն ըստ կացարանի տեսակի
և այցելության նպատակի 2006թ սեպտեմբերից 2007թ. փետրվար ամիսներին(օր)

Մեռը և տարիքը	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության	Այցելություն հարազատների, ընկերների	Այլ	Միջին ընդամենը
Հյուրանոց	6.7	10.3	5.2	14.3	7.5	4.6	10.6	10.3	7.7
Վարձով բնակարան	25.6	42.6	58.4	15.6	19.5	10.5	24.0	29.9	31.3
Մ/Ն ¹ (B&B), պանդոկ	6.2	4.2	0	0	6.0	0	9.3	0	5.7
Բարեկամի կամ հարազատի տանը	17.2	27.2	33.8	19.0	23.5	27.2	25.5	17.8	23.8
Այլ	3.0	0	0	13.5	5.5	0	8.3	8.0	9.9
Մեկ զբոսաշրջիկի հաշվով միջին գիշերած օրերի քանակը	14.9	57.0	50.0	14.7	14.4	13.8	42.0	33.8	32.4

Ներգնա ճանապարհորդների տարածաշրջանային այցելությունների բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի 2006թ սեպտեմբերից 2007թ. փետրվար ամիսներին

(%)

Տարածաշրջանը	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության	Այցելություն հարազատների, ընկերների	Այլ	Միջին ընդամենը
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100
Ք. Երևան	65.6	55.9	55.3	54.8	20.4	40.0	37.9	41.2	39.8
Արագածոտն	1.7	1.6	1.0	4.5	5.4	5.0	5.8	6.9	5.1
Արմավիր	7.8	5.9	7.8	4.0	13.8	12.5	12.5	11.6	11.6
Գեղարքունիք	4.9	7.0	6.8	7.5	12.7	10.0	7.7	6.9	8.2
Կոտայք	5.4	5.1	9.7	8.0	14.9	11.3	9.8	8.4	9.9
Լոռի	3.3	6.3	2.9	2.0	5.7	3.8	4.8	4.9	4.7
Շիրակ	3.0	3.9	12.6	10.1	3.1	7.5	9.6	6.9	7.1
Տավուշ	3.1	3.5	0.0	1.0	6.2	5.0	3.9	3.7	4.1
Վայոց Ձոր	1.4	2.3	0.0	7.0	4.8	1.3	1.9	2.8	2.6
Արարատ	1.8	2.3	1.9	1.0	6.4	1.3	3.2	4.4	3.6
Սյունիք	1.1	5.5	0.0	0.0	2.9	1.3	1.4	0.9	1.6
ԼՂՀ	0.8	0.8	1.9	0.0	3.8	1.3	1.5	1.5	1.8
Մեկ ճանապարհորդի միջինում այցելած վայրերի քանակը	1.4	1.6	1.4	1.5	4.6	2.3	2.0	1.8	2.1

¹ Մահճակալ և նախաճաշ:

Ներգնա ճանապարհորդների կողմից ծառայությունների և հարմարությունների գնահատման կառուցվածքը 2006թ սեպտեմբերից 2007թ. փետրվար ամիսներին

(%)

Ծառայություններ և հարմարություններ	Գերազանց (5)	Լավ (4)	Բավարար (3)	Վատ (2)	Շատ վատ (1)	Ընդամենը	Միջին գնահատականը
Հյուրանոցների	35.2	52.8	9.5	1.6	1.0	100	4.2
Ռեստորանների	45.2	44.0	9.1	1.1	0.6	100	4.3
Հանգստի գոտիների	46.3	37.1	10.9	4.1	1.7	100	4.2
Տուր-օպերատորների	40.7	45.7	12.3	0.0	1.2	100	4.2
Գների մակարդակը	7.9	36.6	30.0	14.7	10.8	100	3.2
Միջազգային տրանսպորտի	28.3	49.8	17.9	3.0	1.1	100	4.0
Ներքին ճանապարհների	8.2	35.4	25.6	16.5	14.2	100	3.1
Տեսարժան վայրերի	61.3	31.6	5.8	0.8	0.4	100	4.5
Զբոսավարի ծառայությունների	42.8	32.2	16.9	3.0	5.1	100	4.0
Սահմանային ծառայությունների արդյունավետությունը	26.3	45.3	19.6	5.9	2.9	100	3.9

Սեկ արտազնա ճանապարհորդի ծախսերի կառուցվածքն ըստ այցելության նպատակի և ճանապարհորդության կազմակերպման 2006թ սեպտեմբերից 2007թ. փետրվար ամիսներին*

	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	Մարզական, մշակութային միջոցառումների մասնակցության	Այցելություն հարազատների, ընկերների	Այլ	Միջին ընդամենը
Տուր-փաթեթով									
Ընդամենը միջին ծախսերը, ԱՄՆ դոլար	X	X	X	X	1886.6	X	X	X	1886.6
Ճանապարհորդության միջին տևողությունը, օր	X	X	X	X	10.9	X	X	X	10.9
Օրական միջին ծախսը, ԱՄՆ դոլար	X	X	X	X	173.6	X	X	X	173.6
Ինքնուրույն									
Ընդամենը միջին ծախսերը, ԱՄՆ դոլար	1457.5	1347.7	1500.6	2033.4	1209.1	863.7	454.1	741.0	1013.3
Ճանապարհորդության միջին տևողությունը, օր	15.8	152.0	121.0	84.2	41.5	20.9	45.6	33.7	57.6
Օրական միջին ծախսը, ԱՄՆ դոլար	92.2	8.9	12.4	24.1	29.1	41.4	10.0	22.0	17.6
Տուր-փաթեթով և ինքնուրույն									
Ընդամենը միջին ծախսերը, ԱՄՆ դոլար	1457.5	1347.7	1500.6	2033.4	1363.6	863.7	454.1	741.0	1035.6
Ճանապարհորդության միջին տևողությունը, օր	15.8	152.0	121.0	84.2	36.7	20.9	45.6	33.7	56.9
Օրական միջին ծախսը, ԱՄՆ դոլար	92.2	8.9	12.4	24.1	37.1	41.4	10.0	22.0	18.2

* Ծանոթություն: Ծախսերի մեջ ներառված չէ հայաստանյան տրանսպորտային միջոցներով իրականացված փոխադրումների արժեքը և տուր-փաթեթի արժեքի շուրջ 20%-ը, որը որպես եկամուտ մնում է տուր-օպերատորներին (հայաստանյան ռեզիդենտներին):

Մեկ ներզնա ճանապարհորդի ծախսերի կառուցվածքն ըստ այցելության նպատակի և ճանապարհորդության կազմակերպման 2006թ սեպտեմբերից 2007թ. փետրվար ամիսներին*

	Գործնական	Աշխատանքի	Կրթության	Բուժման	Հանգստի և ժամանցի	Մարզական, մշակութային միջոցառումներից նասնակցության	Այցելություն հարազատներին, ընկերներից	Այլ	Միջին ընդամենը
Տուր-փաթեթով									
Ընդամենը միջին ծախսերը, ԱՄՆ դոլար	X	X	X	X	1983.8	X	X	X	1983.8
Ճանապարհորդության միջին տևողությունը, օր	X	X	X	X	9.4	X	X	X	9.4
Օրական միջին ծախսը, ԱՄՆ դոլար	X	X	X	X	211.8	X	X	X	211.8
Ինքնուրույն									
Ընդամենը միջին ծախսերը, ԱՄՆ դոլար	991.7	827.1	721.8	841.5	1386.6	858.1	903.3	1412.0	1030.2
Ճանապարհորդության միջին տևողությունը, օր	11.1	25.4	45.5	19.7	14.3	13.4	26.6	19.8	21.8
Օրական միջին ծախսը, ԱՄՆ դոլար	89.1	32.5	15.9	42.8	96.7	64.1	34.0	71.4	47.2
Տուր-փաթեթով և ինքնուրույն									
Ընդամենը միջին ծախսերը, ԱՄՆ դոլար	991.7	827.1	721.8	841.5	1452.4	858.1	903.3	1412.0	1042.0
Ճանապարհորդության միջին տևողությունը, օր	11.1	25.4	45.5	19.7	13.9	13.4	26.6	19.8	21.7
Օրական միջին ծախսը, ԱՄՆ դոլար	89.1	32.5	15.9	42.8	104.5	64.1	34.0	71.4	48.0

* Ծանոթություն: Ծախսերի մեջ ներառված չէ օտարերկրյա տրանսպորտային միջոցներով իրականացված փոխադրումների արժեքը և տուր-փաթեթի արժեքի շուրջ 20%-ը, որը որպես եկամուտ մնում է տուր-օպերատորներին (օտարերկրյա ռեզիդենտներին):